ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» նոյեմբեր 2026թ. ՆՄՈ/310-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N152-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով, 1-ին կետով հաստատված հավելվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի ներդրման նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմում ձևավորել տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստր:
2. Սահմանել՝
   1) Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը և

անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը:

3. ռեեստրի վարման համար պատասխանատու անձ, ռեեստր վարող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության ավագ փաստաթղթավար Ալինա Համբարձումյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Восстановимая подпись

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**